ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

# ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

*Հարգելի՛ ուսուցիչ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

***Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:***

**1** **Ինչպե՞ս են կոչվում ինտերվալի հնչյունները:**

1) Հիմք և գագաթ
2) Հիմնական ձայն և վերին ձայն
3) Հիմնամաս և վերնամաս
4) Հիմք և վերին ձայն

**2** **Ընտրել ճիշտ տարբերակը.**

«Լադի այս տեսակի հիմնական հատկանիշը առաջին և երրորդ աստիճանների միջև ընկած մեծ տերցիան է»:

1) Քրոմատիկ լադ
2) Մաժոր լադ
3) Մինոր լադ
4) Դիատոնիկ լադ

**3** **Ինչպե՞ս է կոչվում աստիճանաբար ուժեղացումը երաժշտության մեջ:**

1) Կրեշչենդո
2) Սֆորցանդո
3) Դինամիկա
4) Դիմինուենդո

**4** **Ընտրել տարբերակը, որում ճիշտ են նշված հնչյունի չորս հիմնական հատկությունները:**

1) ուժգնություն, մեղմացում, սահունություն, տեմպ
2) ուժգնություն, բարձրություն, մեծություն, տեմպ
3) ուժգնություն, մեղմացում, կրկնում, տևողություն
4) ուժգնություն, բարձրություն, տևողություն, տեմբր

**5** **Ո՞ր շարքում է թվարկված ինտերվալների ճիշտ հաջորդականությունը:**

1) Սեկունդա, տերցիա, կվարտա
2) Կվարտա, սեքստա, օկտավա
3) Օկտավա, սեքստա, կվինտա
4) Պրիմա, տերցիա, կվինտա

**6** **Ի՞նչ ձևով կարող են հնչել ինտերվալները և որո՞նք են դրանք:**

1) Երկու ձևով՝ մեղեդային և հարմոնիկ:
2) Չորս ձևով՝ պրիմային, կվարտային, կվինտային և օկտավային:
3) Երեք ձևով՝ մաքուր, մեծ և փոքր:
4) Երկու ձևով՝ քրոմատիկ և դիատոնիկ:

**7** **Նշել պոլիֆոնիա հասկացության ճիշտ բնորոշումը:**

1) Պոլիֆոնիան բազմաձայնության տեսակ է, որտեղ բոլոր ձայներն ինքնուրույն նշանակություն ունեցող մեղեդիներ են:
2) Պոլիֆոնիան բազմաձայնության տեսակ է, որն ունի հոմոֆոն-հարմոնիկ շարադրանք:
3) Պոլիֆոնիան բազմաձայնության տեսակ է, որտեղ գերիշխողը մեղեդին է:
4) Պոլիֆոնիան բազմաձայնության տեսակ է, որտեղ գերիշխողը հարմոնիկ հաջորդականությունն է:

**8** **Ո՞ր շարքում են ներկայացված ռոմանտիզմի ներկայացուցիչները:**

1) Մենդելսոն, Գրիգ, Շոպեն
2) Վիվալդի, Բախ, Բրամս
3) Շուբերտ, Գերշվին, Շոպեն
4) Ռիմսկի-Կորսակով, Բեթհովեն, Բրամս

**9** **Ո՞ր շարքում են ներկայացված բարոկոյի կոմպոզիտորները:**

1) Շուբերտ, Շուման, Շոպեն
2) Չայկովսկի, Յ.Շտրաուս, Գրիգ
3) Բեթհովեն, Շտրաուս, Բախ
4) Վիվալդի, Բախ, Հենդել

**10** **Ո՞ր դարում է ձևավորվել դասական սիմֆոնիան:**

1) XVIII
2) XIX
3) XVI
4) XVII

**11** **Ո՞ր դարում և ո՞րտեղ է ձևավորվել օպերայի ժանրը:**

1) XVIIIդ, Ֆրանսիա
2) XVIIդ., Իտալիա
3) XVդ, Անգլիա
4) XIXդ, Գերմանիա

**12** Նշել ստեղնային-փողային նվագարանները:

1) Ռոյալ, սպինետ
2) Ակորդեոն, երգեհոն
3) Կլավեսին, դաշնամուր
4) Չելեստա, ֆիսհարմոն

**13** Ամերիկացի կոմպոզիտոր, «Պորգի և Բես» օպերայի հեղինակ:

1) Լ.Արմստրոնգ
2) Գ.Միլլեր
3) Դ.Էլինգթոն
4) Ջ.Գերշվին

**14** Ռուս կոմպոզիտոր, «Տրոյկա» ստեղծագործության հեղինակ:

1) Սվիրիդով
2) Պրոկոֆև
3) Գլինկա
4) Մուսորգսկի

**15** Ո՞ր նվագարանն է բնութագրում գայլին Պրոկոֆևի «Պետյա և գայլը» սիմֆոնիկ հեքիաթում:

1) Թավջութակ
2) Կլառնետ
3) Գալարափող
4) Շեփոր

**16** Ո՞ր երաժշտական ոճն է միավորել Դյուկ Էլինգթոնին, Չարլի Պարկերին, Բենի Գուդմենին, Արտեմի Այվազյանին:

1) Պոպ
2) Ռեպ
3) Ռոք
4) Ջազ

**17** Առաջին հայկական ջազային նվագախմբի ստեղծողը:

1) Կ.Օրբելյան
2) Ց.Վարդազարյան
3) Ա.Այվազյան
4) Մ.Վարդազարյան

**18** **Ո՞ր դարաշրջանում է ապրել և ստեղծագործել Ա.Վիվալդին:**

1) Բարոկո
2) Միջնադար
3) Վերածնունդ
4) Ռոմանտիզմ

**19** **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր երգերը Ռոմանոս Մելիքյանինն են:**

1) «Անձրևի երգը»; «Պուտ-պուտիկ»; «Նապաստակի երգը»; «Իմ սիրելի Երևան»
2) «Աշխատանքի երգը»; «Հայաստան»; «Արջամուկը»; «Կովկասի քաջեր»
3) «Երգ մայրիկիս»; «Վարդը»; «Անձրևն եկավ»; «Ես իմ անուշ Հայաստանի»
4) «Շափաղ կուտաս»; «Մանուկն ու ջուրը»; «Մի լար»; «Ծիտիկի սերը»

**20** **Ո՞վ է «Ես մեկ ծառ եմ ծիրանի» երգի հեղինակը:**

1) Շերամ
2) Շիրին
3) Սայաթ-Նովա
4) Ջիվանի

**21** **Նոր տարվա ո՞ր երգի բառերն են. «Թևին առած տարին այս նոր»:**

1) Խոսք՝ Նանսեն Միքայելյանի, երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի «Երգ ձյունանուշիկի և Ձմեռ պապիկի մասին»
2) Խոսք՝ Մկրտիչ Կորյունի, երաժշտ.՝Գեղունի Չթչյանի «Մանուկներն ու Ձմեռ պապին»
3) Խոսք՝ Նանսեն Միքայելյանի, երաժշտ.՝ Ռոբերտ Ամիրխանյանի «Նոր տարվա հանդես»
4) Խոսք՝ Լիպարիտ Սարգսյանի, երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի «Նոր տարվա երգ-պար»

**22** **Ե՞րբ է ստեղծվել և բեմադրվել «Անտունի»բալետը:**

1) 1971թ.
2) 1975թ.
3) 1967թ.
4) 1969թ.

**23** **Նշված բալետներից ո՞րի հեղինակն է կոմպոզիտոր Գրիգոր Եղիազարյանը:**

1) «Անուրջների լիճը»
2) «Գայանե»
3) «Անմահություն»
4) «Երջանկություն»

**24** **Նշված օպերաներից ո՞րի հեղինակն է կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը:**

1) «Ճանապարհորդություն դեպի Էրզրում»
2) «Հերոսուհին»
3) «Սասունցի Դավիթ»
4) «Ալմաստ»

**25** **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր երգերը ստեղծված են Հովհաննես Թումանյանի խոսքերով:**

1) Ռոմանոս Մելիքյան՝ «Վարդը»; Ռոմանոս Մելիքյան՝ «Մանուկն ու ջուրը»; Աշոտ Սաթյան՝ «Մարտիկի երգը»; Ազատ Մանուկյան՝ «Աշուն»
2) Միքայել Միրզայան «Մարտ»; Կոմիտաս՝ «Կաքավի երգը»; Ալեքսանդր Հարությունյան՝ «Հայրենիքիս հետ»; Ռոմանոս Մելիքյան՝ «Աշնան երգ»:
3) Արամ Խաչատրյան՝ «Գարուն Երևան»; Երվանդ Սահառունի՝ «Ջա՜ն հայրենիք»; Մարտին Վարդազարյան՝ «Հեքիաթային ճանապարհ»; Սոֆյա Սամվելյան՝ «Արտուտիկ»:
4) Ռոմանոս Մելիքյանի՝ «Պսակ-պսակ»; Աշոտ Սաթյան՝ «Աղբյուրի մոտ»; Աշոտ Սաթյան՝ «Ես իմ անուշ Հայաստանի»; Ռոբերտ Պետրոսյան՝ «Պատզամ որդուս»:

**26** **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր երգերը և ռոմանսները ստեղծված են Ավետիք Իսահակյանի խոսքերով:**

1) Արամ Սաթյան՝ «Կապույտ երազ»; Դանիել Ղազարյան՝ «Ուռի»; Ալեքսանդր Հարությունյան՝ «Ուռենու տակ»; Էդգար Հովհաննիսյան՝ «Էրեբունի-Երևան»:
2) Էդգար Հովհաննիսյան՝ «Հայաստան»; Խաչատուր Ավետիսյան՝ «Մախմուր աղջիկ»; Ռոբերտ Ամիրխանյան՝ «Հայի աչքեր»; Տիգրան Չուխաջյան՝ «Գարուն»:
3) Արմեն Տիգրանյան՝ «Սև աչերեն շատ վախեցիր»; Հարո Ստեփանյան՝ «Հեյ Արազած»; Ռոբերտ Պետրոսյան՝ «Արարատի ծեր կատարին; Էդվարդ Աբրահամյան՝ «Ես երգիչ եմ»:
4) Ալեքսանդր Սպենդիարյան՝ «Այ Վարդ»; Ռոմանոս Մելիքյան՝ «Ծիտիկի սերը»; Անտոն Մայիլյան՝ «Արևի պես ճիթ անենք»; Միքայել Միրզայան՝«Զենով Օհանի ափսոսանքը»:

**27** **Նշել ճիշտ տողը, որտեղ Ավետ Տերտերյանի նշված Սիմֆոնիաներում հնչում են ոչ ավանդական, ոչ դասական նվագարաններ:**

1) Երկրորդ; Երրորդ; Վեցերորդ; Ութերորդ:
2) Երկրորդ; Հինգերորդ; Վեցերորդ; Ութերորդ:
3) Առաջին; Չորրորդ; Հինգերորդ; Ութերորդ:
4) Առաջին; Երրորդ; Հինգերորդ; Յոթերորդ:

**28** **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր օպերաների հեղինակը Հարո Ստեփանյանն է:**

1) «Խաչատուր Աբովյան»; «Սայաթ-Նովա»; «Գիքոր»; «Ալմաստ»:
2) «Ջեմիրե»; «Մարո»; «Քաջ Նազար»; «Լուսաբացին»:
3) «Անուշ»; «Լուսաբացին»; «Չարի վերջը»; «Խորտակում»:
4) «Քաջ Նազար»; «Սասունցի Դավիթ»; «Նունե»; «Հերոսուհին»:

**29** **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր բալետների հեղինակը Էդգար Հովհաննիսյանն է:**

1) «Հավերժական կուռք»; «Անտունի», «Մարմար»; «Երկնագույն նոկտյուրն»:
2) «Երջանկություն»; «Սևան»; «Անտունի»; «Անմահություն»:
3) «Ձյունե թագուհին»; «Գայանե»; «Անմահություն»; «Դիմակահանդես»:
4) «Անուրջների լիճը»; «Մարմար»;«Սևան»; «Սպարտակ»:

**30** **Նշել ճիշտ տողը, որտեղ նշված են Կոմիտասի մշակմամբ այն ժողովրդական մեղեդիները, որոնք կիրառված են Էդգար Հովհաննիսյանի «Անտունի» բալետում:**

1) «Անտունի», 2. «Կռունկ», 3.«Սիփանա քաջեր», 4. «Շուշիկի»:
2) «Շողեր ջան», «Երկինքն ամպել ա», «Մարալ ջան», «Խնկի ծառ»:
3) «Անտունի», «Կանչե կռունկ», «Մոկաց Միրզա», «Կարոս խաչ»:
4) «Հո˜յ, Նազան», «Հանիկ նայ», «Դանդան, դանի», «Աղվես»:

**31** **Ի՞նչ է դիատոնիկ հնչյունաշարը:**

1) Հնչյունաշարը կազմված է հիմնական հնչյունների կրկնակի փոխոխմամբ:
2) Հնչյունաշարը կազմված է հիմնական հնչյունների ալտերացիայով:
3) Հնչյունաշարը կազմված է հիմնական, չփոփոխված հնչյուններից:
4) Հնչյունաշարը կազմված է հիմնական հնչյունների քրոմատիկ փոխոխմամբ:

**32** **Ինչպե՞ս է դիատոնիզմը դրսևորվում հայկական ժողովրդական երգերում:**

1) Հայկական ժողովրդական երգերում հնչյունների ալտերացված տարբերակումները հանդիպում են քրոմատիկ հաջորդականությամբ:
2) Հայկական ժողովրդական երգերին բնորոշ է քրոմատիզմը:
3) Միևնույն հնչյունի բարձր և ցածր տարբերակները հաջորդում են միմյանց անմիջականորեն:
4) Միևնույն հնչյունի բարձր և ցածր տարբերակները հաջորդում են միմյանց որոշ ընդմիջումով:

**33** **Ինչպե՞ս են ցած հնչյունները հանդես գալիս հայկական ժողովրդական երգերի հնչյունաշարում:**

1) Ցած հնչյունները հանդես են գալիս տերցիա տարածության վրա:
2) Ցած հնչյունները հանդես են գալիս կվինտա տարածության վրա:
3) Ցած հնչյունները հանդես են գալիս կվարտա տարածության վրա:
4) Ցած հնչյունները հանդես են գալիս անկանոն:

**34** **Հայկական ժողովրդական երաժշտության լադերի (ձայնակարգերի) ոչ օկտավայնությունը և դրսևորման տեսակները:**

1) օկտավա տարածության վրա տոնիկան ունի նույն ֆունկցիոնալ նշանակությունը:
2) օկտավա տարածության վրա օժանդակ հենակետն ունի նույն ֆունկցիոնալ նշանակությունը:
3) լադի (ձայնակարգի) հնչյունաշարում կրկնվող հնչյուններն ունեն տարբեր ֆունկցիոնալ նշանակություն:
4) ֆունկցիոնալ տեսակետից որոշ հնչյուններ օկտավա տարածության վրա կրկնվում են:

**35** **Նշել ճիշտ տողը, որտեղ սփյուռքահայ կոմպոզիտորների անուններ են:**

1) Սոֆա Ազնաուրյան; Գեղունի Չթչյան; Հարո Ստեփանյան; Տիգրան Չուխաջյան:
2) Նիկոլ Գալանտերյան; Շառլ Ազնավուր; Ալան Հավհաննես; Բարսեղ Կանաչյան:
3) Միքայել Թարիվերդիև; Ժորժ Կառվարենց; Երվանդ Երկանյան; Մարտին Մազմանյան:
4) Արա Պարթևյան; Ստեփան Բաբաթորոսյան; Նարինե Զարիֆյան; Երվանդ Սահառունի:

**36** **Նշել «Գարուն ա» ժողովրդական երգի Կոմիտասի խմբերգային մշակման մեջ կիրառված բազմաձայնության տեսակը:**

1) հոմոֆոն-հարմոնիկ;
2) հոմոֆոն-պոլիֆոն:
3) հոմոֆոն;
4) պոլիֆոն;

**37** **Նշել ճիշտ տողը, որտեղ հայ դիրիժորների անուններ են:**

1) Միքայել Մալունցյան, Դավիթ Խանջյան, Գևորգ Բուդաղյան, Ռուբեն Ասատրյան:
2) Կարեն Դուրգարյան, Ստեփան Բաբաթորոսյան, Ստեփան Լուսիկյան, Ռոբերտ Պետրոսյան:
3) Էդգար Հովհաննիսյան, Ալեքսանդր Հարությունյան, Գևորգ Արմենյան, Արմեն Տիգրանյան:
4) Նիկողայոս Տիգրանյան, Հարո Ստեփանյան, Գրիգոր Եղիազարյան, Աշոտ Սաթյան:

**38** **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր խմբերգերի հեղինակը Ռոբերտ Պետրոսյանն է:**

1) «Գարնանային», «Փշատենի փոքրիկ ծառ», «Այբ, բեն, գիմ», «Գարուն եկավ»:
2) «Ծիտիկի սերը»; «Վասպուրական»; «Անձրևի երգը»; «Մուսա լեռան կարոտը»:
3) «Մեր հին ու նոր Երևան», «Արաքսն ասաց», «Խաչքար», «Մեր սուրբ զոհեր»:
4) «Իմ ուսուցիչ», «Եղբայր եմք մենք», «Աղջկա երգը», «Ուրախության ձոներգ»:

**39** **Նշել ճիշտ տողը, որտեղ հայ նշանավոր օպերային երգիչների անուններ են:**

1) Պավել Լիսիցյան; Հայկանուշ Դանիելյան; Տաթևիկ Սազանդարյան; Ավագ Պետրոսյան:
2) Ռոբերտ Բաբուրյան; Բարսեղ Թումանյան; Վարդուհի Վարդանյան; Վարդան Բադալյան:
3) Նար Հովհաննիսյան; Գոհար Գալաչյան; Ռազմիկ Ամյան; Ալլա Լևոնյան :
4) Գոհար Գասպարյան;Մարիետա Անտոնյան; Զարուհի Բաբայան; Արսեն Գրիգորյան:

**40** **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր երաժշտական ստեղծագործությունների գրական տեքստի հեղինակը Պարույր Սևակն է:**

1) Էդգար Հովհաննիսյան «Հայաստան»; Էդգար Հովհաննիսյան «Էրեբունի-Երևան»; Հարո Ստեփանյան «Անլռելի զանգակատուն» օրատորիա; Էդգար Հովհաննիսյան «Սարդարապատ»:
2) Էդգար Հովհաննիսյան «Սարդարապատ»; Ռոբերտ Պետրոսյան «Պատգամ որդուս»; Արեգ Լուսինյան «Իմ ուսուցիչ»; Առնո Բաբաջանյան «Մեր սիրելի Երևան»:
3) Էդգար Հովհաննիսյան «Հայաստան»; Ռոբերտ Պետրոսյան «Հայաստան» Արեգ Լուսինյան «Զանգն առաջին»; Մելիք Մավիսակալյան «Ջան, Հայաստան»:
4) Էդգար Հովհաննիսյան «Էրեբունի-Երևան»; Գեղունի Չթչյան «Անձրևի երգը»; Ալեքսանդր Դոլուխանյան «Երևանի գիշերները»; Արամ Խաչատրյան «Գարուն Երևան»:

**41** **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր ստեղծագործությունների հեղինակը Արտեմի Այվազյանն է:**

1) «Հայաստան»; «Իմ Երևան»; «Իմ ուսուցիչ»; «Միշտ առույգ»:
2) «Կարինե»; «Վերադարձի երգ»; «Արջի վիշտը»; «Դպրոցի ճամփան»:
3) «Աղջկա երգը»; «Հայկական ռապսոդիա»; «Հայաստան»; «Կարինե»:
4) «Աղջկա երգը»; «Հեքիաթային ճանապարհ»; «Արևիկ»; «Էրեբունի-Երևան»:

**42** **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր երգերի հեղինակը Արեգ Լուսինյանն է:**

1) «Ողջույն ուսուցչին»; «Զանգն առաջին»; «Երևանի գիշերները»; «Անձրևի երգը»:
2) «Խուտուտ-մուտուտ»; «Աշուն»; «Երգ ձյունանուշիկի և ձմեռ պապիկի մասին»; «Ծիտիկի սերը»:
3) «Բարձրիկ Հայաստան»; «Ուղիղ կարգով»; «Պատգամ որդուս»; «Պսակ-պսակ»:
4) «Ողջույն ուսուցչին»; «Նոր տարվա երգ-պար»; «Զանգն առաջին»; «Բարձրիկ Հայաստան»:

| 43 | Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի: |
|---|---|




1) Շոպեն Պոլոնեզ
2) Գլինկա «Կամարինյան»
3) Մոցարտ Սիմֆոնիա թ.40
4) Մենդելսոն «Երգ առանց խոսքի»

| 44 | Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը ըստ նոտագրված օրինակի: |
|---|---|



1) Չայկովսկի «Ծաղիկների վալսը»
2) Յ.Շտրաուս «Վալս»
3) Շոպեն «Նոկտյուրն»
4) Չայկովսկի «Փաթիլների պարը»

**45** Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի:




1) Մոցարտ ՝ «Օրորոցային»
2) Շոպեն ՝ «Նոկտյուրն»
3) Ռիմսկի-Կորսակով ՝ «Շահարազադե»
4) Մենդելսոն ՝ «Վենետիկի գոնդոլավարի երգը»

**46** Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի:




1) Չայկովսկի «Սերենադ»
2) Բիզե Նախերգանք «Կարմեն» օպերայից
3) Մոցարտ «Փոքրիկ գիշերային սերենադ»
4) Սվիրիդով «Տրոյկա»

**47** Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի:




1) Գրիգ՝ «Անիտրայի պարը»
2) Մուսորգսկի ՝ «Պատկերներ ցուցահանդեսից»
3) Ռիմսկի-Կորսակով՝ «Շահարազադե»
4) Գերշվին՝ Ռապսոդիա բլյուզի ոճով

**48** Նշել ճիշտ տողը, որտեղ նշված են «Հովիվ» հայկական ժողովրդական երգի ձայնակարգի տոնիկան և օժանդակ հենակետը:



1) դո, մի
2) դո,ռե:
3) սի. մի
4) սի, ռե

**49** Որոշել «Հանի՛կ նայ» հայկական ժողովրդական երգի ժանրը:



1) պարերգ
2) աշխատանքային
3) Պատմական
4) պանդխտության

**50** Որոշել Ք. Կարա-Մուրզայի մշակմամբ «Լեպհո՜, լե՜, լե՜» ժողովրդական երգի ձևը:



1) եռամաս,
2) ռոնդո:
3) միամաս,
4) երկմաս,

**51** Որոշել Արմեն Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայի «Տղամարդկանց քայլերգի» ձևը:



1) եռամաս
2) ռոնդո
3) միամաս
4) երկմաս

**52** Ո՞ր երգն է նոտագրված:



1) «Սոնա յար»;
2) «Սարեն ելավ»:
3) «Շողեր ջան»;
4) «Իմ չինարի յարը»;

**53** **«Շողեր ջան» ժողովրդական երգի լադի (ձայնակարգի) ո՞ր ձայնաստիճանն է ալտերացված:**



1) սի բեկար;
2) դո:
3) լա;
4) սի բեմոլ;

**54** **Որոշել «Հո՛յ, Նազան» ժողովրդական երգի լադը (ձայնակարգը):**



1) փռյուգիական;
2) դորիական:
3) էոլական;
4) իոնական;

**55** **Նշել երկու տարբերակները, որտեղ կառուցված են միայն մաքուր կվինտա ինտերվալներ դեպի վեր:**

1) ֆա դիեզ-դո, սի-ֆա, լա-մի բեմոլ
2) սի-ֆա, ռե բեմոլ -լա, դո- սո
3) ռե-լա բեմոլ, սի բեմոլ -ֆա, մի բեմոլ -լա բեմոլ
4) սի բեմոլ -ֆա, դո դիեզ-սո դիեզ, սի-ֆա դիեզ
5) լա-մի, դո-սո, ֆա դիեզ-դո դիեզ

**56** Ընտրել տրված լուծված երաժշտամաթեմատիկական օրինակներից երկու ճիշտ տարբերակները՝ հաշվի առնելով ինտերվալների տոնային և աստիճանային մեծությունը:

1) մծց.4 + մ.3 = փ.7
2) փ.3 + փ.3 = մծց.4
3) մաք.5 + մ.2 = փքց.7
4) մաք.4 +մ.3 = մ.6
5) մծց.2 + փքց.5 = փ.6

**57** Ընտրել տրված լուծված երաժշտամաթեմատիկական օրինակներից երկու սխալ տարբերակները՝ հաշվի առնելով ինտերվալների տոնային և աստիճանային մեծությունը:

1) մ.7 - փ.3 = փ.6
2) փքց.7- մաք.4 = փ.3
3) մծց.5 – փ.3 = մաք.4
4) փ.7 - մաք.5 = փ.3
5) մծց.4 - մծց.2 = մ.3

**58** Նշել երկու գործիքային ժանրեր:

1) Օրատորիա
2) Տոկատ
3) Օպերա
4) Կանտատ
5) Ֆանտազիա

**59** Նշել երկու ճիշտ տողերը, որտեղ վոկալ երաժշտության ժանրերն են:

1) Սպիրիչուել, մադրիգալ, երգ
2) Կանտատ, ռոմանս, բալլադ
3) Ռոմանս, երգ, օրատորիա
4) Արիա, վոկալիզ, արիոզո
5) Երգ, սյուիտ, սաղմոս

**60** Նշել երկու կոմպոզիտորների, ովքեր ստեղծագործել են նաև բալետային ժանրում:

1) Բեթհովեն
2) Մոցարտ
3) Շոպեն
4) Գլինկա
5) Շուբերտ

**61** Նշել երկու բազմաձայն ստեղծագործություններ, որոնցում թեման անցնում է բոլոր ձայներում:

1) Կանոն
2) Ֆուգատո
3) Խորալ
4) Սաղմոս
5) Ֆուգա

**62** Նշել երկու լեհական ժողովրդական պարեր:

1) Մենուետ
2) Պոլոնեզ
3) Պոլկա
4) Տրեպակ
5) Մազուրկա

**63** Նշել Բեթհովենի գրչին պատկանող երկու ստեղծագործություններ:

1) «Ֆիդելիո»
2) «Օզեի մահը»
3) Ռեքվիեմ
4) «Պրոմեթեսի արարչությունը»
5) Սերենադ

**64** Նշել ժամանակային երկու արվեստ:

1) Գրականություն
2) Քանդակագործություն
3) Կերպարվեստ
4) Երաժշտություն
5) Ճարտարապետություն

**65** **Նշել Ռիմսկի-Կորսակովի երկու օպերա:**

1) «Ձյունանուշ»
2) «Կախարդական սրինգ»
3) «Ոսկե աքաղաղը»
4) «Ռուսլան և Լյուդմիլա»
5) «Դոն Ժուան»

**66** **Համապատասխանեցնել երաժշտական տերմիններն իրենց սահմանումներին:**

Ա) տակտ
Բ) տեմպ
Գ) ռիթմ
Դ) մեղեդի

1) երաժշտության մեջ դանդաղ, միջին և արագ ընթացքը,
2) միաձայն արտահայտված երաժշտական միտքը:
3) իրար հաջորդող տարբեր տևողությունների փոխհարաբերությունը,
4) մի շեշտից մյուսն ընկած հատվածը,
5) կայուն և անկայուն աստիճանների փոխհարաբերությունը,
6) երկու հնչյունների միջև ընկած հեռավորությունը,

| Ա | Բ | Գ | Դ |
|---|---|---|---|
| | | | |

**67** **Համապատասխանեցնել ստեղծագործությունը՝ հեղինակած կոմպոզիտորին:**

Ա) Դաշնամուրային ռապսոդիա
Բ) Հունգարական ռապսոդիա
Գ) Ռապսոդիա բլուզի ոճով
Դ) Հայկական ռապսոդիա

1) Շոպեն
2) Տտոզարենկո
3) Իպոլիտով-Իվանով
4) Լիստ
5) Բրամս
6) Գերշվին

| Ա | Բ | Գ | Դ |
|---|---|---|---|
| | | | |

**68** **Համապատասխանեցնել կոմպոզիտորների ազգությունը:**

Ա) Շոպեն
Բ) Մենդելսոն
Գ) Բիզե
Դ) Մուսորգսկի

1) Ավստրիացի
2) Հունգարացի
3) Ռուս
4) Ֆրանսիացի
5) Գերմանացի
6) Լեհ

| Ա | Բ | Գ | Դ |
|---|---|---|---|
| | | | |

**69** **Համապատասխանեցնել օպերաները հեղինակած կոմպոզիտորին:**

Ա) «Հեքիաթ Սալթան թագավորի մասին»
Բ) «Պորգի և Բես»
Գ) «Ռուսլան և Լյուդմիլա»
Դ) «Հսկան»

1) Մուսորգսկի
2) Մոցարտ
3) Գլինկա
4) Պրոկոֆև
5) Գերշվին
6) Ռիմսկի-Կորսակով

| Ա | Բ | Գ | Դ |
|---|---|---|---|
| | | | |

**70** **Համապատասխանեցնել կոմպոզիտորներին և նրանց ծննդավայրը:**

Ա) Մոցարտ
Բ) Բախ
Գ) Բեթհովեն
Դ) Շտրաուս

1) Լայպցիգ
2) Բեռլին
3) Վիեննա
4) Զալցբուրգ
5) Այզենախ
6) Բոնն

| Ա | Բ | Գ | Դ |
|---|---|---|---|
| | | | |

**71** **Ի՞նչ նվագարանների են տիրապետել նշված ջազային երաժիշտները:**

Ա) Բենի Գուդմեն
Բ) Գլեն Միլլեր
Գ) Դյուկ Էլինգթոն
Դ) Պոլ Մոտյան

1) Շեփոր
2) Սաքսաֆոն
3) Դաշնամուր
4) Կլառնետ
5) Տրոմբոն
6) Թմբուկ

| Ա | Բ | Գ | Դ |
|---|---|---|---|
| | | | |

**72** **Համապատասխանեցնել գրական ստեղծագործությունները հեղինակներին:**

Ա) «Հեքիաթ Սալթան թագավորի մասին»
Բ) «Ձյունանուշ»
Գ) «Դիմակահանդես»
Դ) «Պեր Գյունտ»

1) Օստրովսկի
2) Ռելշտաբ
3) Իբսեն
4) Պուշկին
5) Մուլլեր
6) Լերմոնտով

| Ա | Բ | Գ | Դ |
|---|---|---|---|
| | | | |